Հայտարարություն

Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

«ՀՀ Լոռու մարզի Դեբեդի միջնակարգ դպրոց» , «ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1.ՀՀ քաղաքացիությունը

2.«Հանրկրթության մասին» օրանքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով

2. ՀՀ քաղաքացու և անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ)

3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ)

4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում ՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին

5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Փամստաթղթերն ընդունվում են **2022թ-ի սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ-ի սեպտեմբերի 22-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 900-ից 1500-ն՝ բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Դեբետի Սմարթ կենտրոնում:

Մրցույթը տեղի կունենա **2022թ-ի հոկտեմբերի 6-ին՝ ժամը 1500-ին**. հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Դեբետ , փողոց 1, հողամաս 31, ուսումնակրթական կենտրոն (Սմարթ կենտրոն):

Տեղեկությունների համար զանգահարել 099938323, էլ. հասցե՝ debed@schools.am: